Կարծիք

Քրիստինա Մելսի Թորգոմյանի «Անգլերենի համակցված ուսուցման մեթոդական համակարգը ոչ լեզվական բուհում» ԺԳ.00.02 – Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Անգլերենի համակցված ուսուցման դասընթաց կազմակերպելու գաղափարը հետաքրքիր է տարբեր տեսանկյուններից: Նախ, այն արդիական է, քանի որ, կրթության ժամանակակից համակարգերը հնարավոր չէ պատկերացնել առանց համակցված ուսուցման տեխնոլոգիաների կիրառման: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ ոչ լեզվական բուհում համակարգչային, տեխնիկական միջոցների կիրառումն ինչ-որ առումով ավելի մատչելի է: Դա վերաբերում է թե՛ լսարանների հագեցվածությանը, թե՛ ոչ հումանիտար ուղղվածության առարկաների բովանդակային բնութագրերի: Խնդիր է դրվում համադրել առդեմ և «համակցված ուսուցման» տեխնոլոգիաները: Ատենախոսության կարևոր խնդիրներից է տարբեր բառագիտական, բառակազմական և քերականական վարժությունների մի համակարգ ստեղծելը, որը ատենախոսին հաջողվում է: Նրան հաջողվում է նաև համակցել անգլերենի դասավանդման գործընթացում առդեմ դասերն առցանց ռեսուրսներով: Դրական է այն, որ ատենախոսն իր հիմնական գաղափարները «կորզում» է նախ և առաջ իր փորձի հիման վրա:

Հետազոտության գիտական նորույթը կասկած չի հարուցում, քանի որ ատենախոսը մշակել է համապատասխան վարժությունների համակարգ, որոնց արդյունավետությունը հիմնավորվել է փորձարարական ուսուցման ընթացքում: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նրա կողմից մշակած պլատոյի էֆեկտի հաղթահարման մոտիվացիայի մատրիցը, որը նորույթ է հայ մեթոդական իրականության մեջ:

Բավականին լավ է մշակված ատենախոսության հասկացական ապարատը: Նա հստակորեն սահմանում է հետազոտության համար կարևոր հասկացությունները և կարգերը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, գրականության ցանկից, և հավելվածներից:

Ներածական մասում ատենախոսը հիմնավորում է հետազոտության արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ձևակերպում է հետազոտության վարկածը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները:

Ատենախոսության առաջին «Անգլերենի համակցված ուսուցման մեթոդական համակարգը ոչ լեզվական բուհում. Անգլերենի դասավանդման մեթոդիկայի առանձնահատկությունները, առավելություններն ու թերությունները» գլուխը բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին «Հաղորդակցման միջոցների և տեխնոլոգիաների դիդակտիկ հնարավորությունները անգլերենի դասավանդման գործընթացում» ենթագլխում ատենախոսը քննության է առնում հաղորդակցական միջոցների և տեխնոլոգիաների դիդակտիկ հնարավորությունները, հիմնավորում է հաղորդակցական միջոցների և տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը, համեմատում է առերես և առցանց ուսուցման տեխնոլոգիաները:

Երկրորդ «Անգլերենի դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդները, դրանց առավելություններն ու թերությունները» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է անգլերենի ուսուցման ավանդական, դասական և ժամանակակից մեթոդները: Ուշադրության է արժանի հատկապես հաղորդակցական մոտեցման սկզբունքներին և Դոգմե մեթոդին վերաբերող բաժինները:

Երկրորդ «Անգլերենի համակցված ուսուցման մեթոդը՝ ուսումնական գործընթացի բարելավման պայման» գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Երկրորդ «Ստեղծարարությունը և ուսուցման կառավարման համակարգերի դերը համակցված ուսուցման պայմաններում» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է

Վոլլասի «4 փուլային գործընթաց» մոդելը, Ռոդեսի 4 Պ-երի գաղափարը՝ Պերսոնա (Person), Պրոցես (Process), Պրեսսա (Press) և Պրոդուկտ (Product), Սթիվեն Ջոնսոնի հայեցակարգը, ՈւԿՀ ծրագրակազմի փաթեթները, որոնք նոր շունչ են հաղորդում նրա կողմից մշակված մեթոդական համակարգին:

Երրորդ «Համակցված ուսուցմամբ անգլերենի դասավանդման գործընթացը և առցանց հարթակների օգտագործման հնարավորությունները» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին «Համակցված ուսուցման կիրառումը բուհերում անգլերենի դասավանդման գործընթացում» ենթագլխում ատենախոսը բացահայտում է համակցված ուսուցման հնարավորությունները բուհական համակարգում: Դրական է այն, որ նա ներկայացնում է կոնկրետ բուհի՝ ՀՊՏՀ-ի փորձը: Նրա կողմից իրականացված SWOT վերլուծությունը ներկայացնում է ՀՊՏՀ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետում համակցված ուսուցման ներդրման ուժեղ և թույլ կողմերը: Դրական և հավաստի կարելի է գնահատել փորձարարական ուսուցման արդյունքները:

Երկրոդ «Ոչ լեզվական բուհում փորձարարական դասավանդման գործընթացը, վերլուծական գործիքների օգնությամբ հետազոտության իրականացումը» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է փորձարարական ուսուցման ընթացքը, մեթոդները, վիճակագրական տվյալները, և ամփոփում է արդյունքները:

Երրորդ «Ոչ լեզվական բուհում առցանց հարթակների միջոցով անցկացվող անգլերենի դասերը, առանձնահատկություններն ու ամփոփված արդյունքները» ենթագլխում Քրիտինա Թորգոմյանը ներկայացնում է առցանց հարթակների միջոցով անցկացվող անգլերենի դասերը: Ուշադրության է արժանի հատկապես Nearpod առցանց հարթակի նկարագրությունը: Հանգամանորեն ներկայացված են նաև տեքստի շուրջ աշխատանքի ընթացակարգերը համակցված ուսուցման շրջանակներում:

Ատենախոսին հաջողվել է մշակել արդյունավետ վարժությունների համակարգ, իրականացնել գիտափորձ, որի արդյունքները հավաստի են:

Կարելի է պնդել, որ կատարված է բավականին օգտակար, ամբողջական, տեսական և գործնական նշանակություն ունեցող աշխատանք, որի նորույթը կասկած չի հարուցում: Սեղմագիրը և հոդվածները արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Կարծում ենք հետևյալ նկատառումները կօգնեն ատենախոսին ավելի բարելավել աշխատանքը:

1. Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ էջ 60, ատենախոսության մեջ առանձնացված են կրթական թվային ռեսուրսների օգտագործման առանձնահատկությունները՝ բաղկացած 4 կետերից, ինչպես նաև նշված է, որ հնարավոր է ուսուցման կառավարման համակարգերի միջոցով հետևել ուսումնական գործընթացին՝ կիրառելով ՈւԿՀ-ներում գոյություն ունեցող տարբեր գործառույթներ: Կցանկանայինք, որ ատենախոսը մանրամասներ տվյալ գործառույթները:
2. Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ էջ 79-ում ներկայացվել են ձևավորող և ամփոփիչ գնահատման ձևերը: Ցանկալի է, որ ատենախոսը մեկնաբանի, թե ինչու է նախընտրելի համարել ձևավորող գնահատումը իրականացրած փորձարարության շրջանակներում, և ինչ գործիքակազմ է կիրառվել նման գնահատման ընթացքում:
3. Էջ 85-ում վեր են հանվել համակցված ուսուցման առավելությունները: Արդյո՞ք դուք դիտարկել եք համակցված ուսուցման թերությունները, և եթե բացահայտել եք դրանք, ապա աշխատանքը ավելի կշահեր, եթե վերջիններս նույնպես ներառվեին առավելությունները ներկայացնելուց անմիջապես հետո:
4. Հետազոտության շրջանակներում՝ էջ 88-ում իրականացվել է SWOT վերլուծություն, որտեղ մանրամասն կերպով ներկայացվել են համակցված ուսուցման ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև սպառնալիքները և

հնարավորությունները: Կցանկանայինք, որ պարզաբաներիք, արդյոք ձեր փորձարարական դասավանդման ընթացքում բախվել եք սպառնալիքների և փորձել եք լուծումներ գտնել թույլ կողմերի և սպառնալիքների նվազեցման հարցում:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ Քրիստինա Մելսի Թորգոմյանի «Անգլերենի համակցված ուսուցման մեթոդական համակարգը ոչ լեզվական բուհում» ատենախոսությունը ամբողջական, լեզվական և գիտական բարձր մակարդակով իրականացված հետազոտություն է, համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի /ԺԳ. 00. 02 թվանիշով/ գիտական աստիճանին ներկայացվող ժամանակակից պահանջներին, միջնորդում ենք ԵՊՀ-ում գործող՝ ԲՈԿ-ի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առջև նրա հեղինակին շնորհելու իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս,

մանկ, գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ի.Կ.Կարապետյան

Ի.Կ.Կարապետյանի ստորագրությունը

հաստատում եմ՝ Վ. Բրյուսովի պետական համալսարանի

գիտ.քարտուղար Հ.Փիլավջյան

29.11.2023թ.